ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արտակ Արտուշի Մարտիրոսյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Աշմատի Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Լիանա Հայկազի Գրիգորյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Արման Սասունի Դաղունց

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ - ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հոկտեմբերի 28-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. Սեպտեմբերի 17-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Տ. Մարտիրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը:

Գյուղատնտեսական ոլորտը, տնտեսավարման տեսանկյունից, համարվում է ռիսկային՝ պայմանավորված բնակլիմայական, անասնապահական և առողջապահական օբյեկտիվ գործոններով: Ռիսկերի մեղմման արդյունավետ միջոց է ապահովագրությունը, որի շնորհիվ որոշակիորեն կանխվում են նշված գործոններից բխող վնասները: Այս առումով, գյուղատնտեսության ապահովագրության կազմակերպման, լայնածավալ ներդրման և ֆինանսավորման հիմնախնդիրները միշտ էլ գտնվել են ինչպես ոլորտի մասնագետների, տեսաբանների, այնպես էլ գործարարների ուշադրության կենտրոնում, քանի որ գյուղատնտեսությունը, կենսական նշանակությամբ հանդերձ, օբյեկտիվ ռիսկեր է պարունակում, ինչն էլ հաճախ խոչընդոտում է ապահովագրության գործարքների ընդլայնմանը: Ապահովագրական ընկերությունները, թերևս, առանձնակի ձգտում չունեն զարգացնելու գյուղատնտեսության ապահովագրության շուկան, քանի որ այդ առումով հիմնականում չեն ստանում անհրաժեշտ պետական աջակցություն, մասնավորապես՝ ապահովագրական սուբսիդիաներ, գործունեության հարկային արտոնություններ և այլն: Ուստի կարելի է ասել, որ վերջիններս գերադասում են շրջանցել գյուղատնտեսությանն առնչվող ապահովագրական պայմանագրերի կնքման գործընթացը: Մյուս կողմից, գյուղատնտեսության ապահովագրության ինստիտուտի նպատակահարմարությունը ներկայում դիտարկվում է զուտ ապահովագրողի և ապահովադրի տեսանկյունից, իսկ 2020 թ.-ից ներդրվել է նաև պետական աջակցությամբ (մեկնարկային) պիլոտային ծրագիր, համաձայն որի՝ դեռևս փոխհատուցման ենթակա չէ բերքի կորուստը: Սակայն, գյուղատնտեսության ապահովագրությունն ընդգրկում է ավելի մեծ թվով շահառուների, որոնց նպատակադրումները փոխկապակցված են գործընկերային համագործակցությամբ և շահերի ներդաշնակեցմամբ, ինչը և պետք է հաշվի առնել գյուղատնտեսական ապահովագրության արդյունավետությունը գնահատելիս:

Այսպես՝ եթե պետությունը անվերապահորեն ձգտում է գյուղատնտեսական ապահովագրության գործընթացի ընդլայնմանը՝ ելնելով հիմնականում երկրի պարենային անվտանգության ապահովման շահից, ապա տեղական ինքնակառավարման մարմինները փորձում են ակտիվացնել ագրոապահովագրությունը՝ կանխարգելելով գյուղական բնակչության միգրացիան, նպաստելով գյուղատնտեսության զարգացմանը, ապահովագրելով գյուղացուն տարերային աղետներից, բարձրացնելով գյուղաբնակների կենսամակարդակը:

Որպես գյուղատնտեսության ապահովագրության առանձնահատուկ շահառուներ՝ հանդես են գալիս նաև գործարար ոլորտի այնպիսի սուբյեկտներ, ինչպիսիք են առևտրային բանկերը, սննդամթերք վերամշակող ձեռնարկատերերը, գյուղատնտեսական արտադրանք

մթերող և իրացնող կազմակերպությունները: Առևտրային բանկերը նույնպես շահախնդիր են գյուղատնտեսական ապահովագրության ընդլայնման հարցում, քանի որ դրանով իսկ զգալիորեն բարձրանում է գյուղացու վարկունակության աստիճանը: Իրենց հերթին, սննդամթերք վերամշակող կազմակերպությունները գյուղատնտեսական ապահովագրությունը դիտարկում են որպես արդյունավետ միջոց գյուղմթերքների անխափան արտադրության և մատակարարման տեսանկյունից, որից զգալիորեն կախված է իրենց գործունեության արդյունավետությունը:

Ունենալով շահառուների այսպիսի լայն շրջանակ, այսուհանդերձ, գյուղատնտեսության ապահովագրության գործընթացը ՀՀ-ում դանդաղորեն է առաջ շարժվում, որի պատճառներից մեկն էլ ապահովագրական ինստիտուտի ներդրման արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցումների բացակայությունն է: Մասնավորապես՝ դեռևս իրենց լուծումներին են սպասում ապահովագրության ներդրման արդյունավետ քաղաքականության հայեցակարգի մշակումը, գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության չափելիության համակարգի ստեղծումը, ապահովագրական ռիսկերի զսպման շահադրդիչ համակարգի ձևավորումը, շահառուների շրջանում թափանցիկ տեղեկատվության և հաշվետվողականության համակարգի կիրառումը:

Բարդություններ են առաջանում նաև գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման առումով: Ներկայում ապահովագրական գործընթացին առնչվող տարբեր շահառուներ դեռևս չեն կարողանում հասկանալ, թե ինչ տնտեսական հետագիծ է թողնում ապահովագրական գործընթացը, և ինչ չափով է այն անդրադառնում իրենց գործունեության վրա, քանի որ չի կիրառվում գյուղապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման համակարգային մոտեցում: Բանն այն է, որ ներկայում համապատասխան գործարքի արդյունավետությունը գնահատում են սոսկ ապահովագրության պայմանագրային կողմեր հանդիսացող ապահովադիրն ու ապահովագրողը, մինչդեռ գործընթացին առնչվող մյուս շահառուների գնահատումները շրջանցվում են:

Միաժամանակ, եթե ապահովագրական ընկերությունը գնահատում է իր գործունեության ֆինանսական կայունությունը, ապա ֆերմերը որոշում է ապահովագրության նպատակահարմարությունն ըստ կատարված ապահովագրավճարների և ստացված փոխհատուցումների: Սակայն, գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման այս սահմանափակ շրջանակը չի կարող շահադրդել և ազդակներ հաղորդել գործընթացի մյուս շահակիցներին, որոնք, չունենալով համապատասխան տեղեկություններ, չեն կարողանում ընդունել համապատասխան որոշումներ:

Հետևաբար՝ չափազանց կարևորվում է գյուղատնտեսության ապահովագրության գործընթացի հաշվետվողականության համակարգի ներդրումը, որն էլ, իր հերթին, պահանջում է ապահովագրական արդյունքների հստակ հաշվառում և ստացված տեղեկությունների հասցեագրում բոլոր շահառուներին, ինչի շնորհիվ կապահովվեն ֆինանսական ցուցանիշների թափանցիկություն և հետադարձ կապ: Ապահովագրության հաշվետվողականության համակարգի բարելավումը, անկասկած, հնարավորություն կտա շահառուներին ոչ միայն ընդունելու արդյունավետ որոշումներ, այլև հետևողականորեն իրագործելու դրանք: Հարկ է նշել, որ գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման հիմնախնդիրները, դրանց քննարկումները և լուծման ուղիների առաջադրումները տեղ են գտել ինչպես օտարերկրյա տեսաբանների, այնպես էլ հայ հետազոտողների աշխատություններում: Սակայն, հատկապես գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման մեթոդաբանական մոտեցումների առումով, բազմաթիվ հիմնահարցեր դեռևս չեն ստացել խորքային լուծումներ, ինչն էլ կանխորոշել է ատենախոսության թեմատիկ ուղղվածությունը, կատարված հետազոտության արդիականությունը և խնդրո առարկայի հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Հետազոտության նպատակն է մշակել և ներկայացնել ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության որակական և ֆինանսական գնահատման բարելավված մեթոդաբանություն, որը հնարավորինս հաշվի կառնի ապահովագրական գործընթացին առնչվող շահառուների նպատակադրումները և դրանց հասանելիության մեկնաբանությունները՝ վերլուծության տեսանկյունից:

Ելնելով հետազոտության նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- մշակել գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման հայեցակարգ, որը հնարավորություն կընձեռի համակողմանի վերլուծելու ապահովագրական գործընթացի տարբեր շահառուների սպասումների բավարարման աստիճանը և օժանդակելու ապահովագրական գործընթացի ակտիվացման շահադրդիչ լծակների կիրառմանը,
- առաջարկել գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման և վերլուծության համադրելի ցուցանիշներ,
- առաջարկել ներդրման արդյունավետությունը գնահատող համակարգ՝ համախմբելով գյուղատնտեսության ապահովագրության բոլոր շահառուների ոլորտային սպասումները, արձանագրելով ապահովագրական գործընթացի փաստացի վերջնարդյունքները, բացահայտելով ապահովագրության փաստացի վերջնարդյունքների շեղումները շահառուների սպասումներից,
- գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման համար կիրառել միասնական չափելիություն, որը թույլ կտա իրականացնել համեմատական վերլուծություն,

- ներկայացնել գյուղատնտեսության ապահովագրության հաշվետվողականության կառուցակարգ՝ հետադարձ կապ ապահովելով ապահովագրական գործընթացի շահառուների միջև և դրանով իսկ նպաստելով ապահովագրության ներդրման արդյունավետության բարձրացմանն ուղղված որոշումների կայացմանը:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ապահովագրության ոլորտը՝ իրեն հատուկ գործառույթներով, կազմակերպական ու ֆինանսական կառույցներով և նորմատիվ կարգավորիչներով:

Հետազոտության առարկան գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման հիմնախնդիրներն են, որոնք վերաբերում են ոչ միայն պայմանագրային կողմերին, այլև ապահովագրական գործընթացի ուղղակի և անուղղակի շահառուներին:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Հետազոտության համար որպես տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել գյուղատնտեսության ապահովագրության վերաբերյալ հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, մակրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, ՀՀ վիճակագրական և ուսումնասիրման բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական վերացարկման (աբստրակցիայի), ֆինանսատնտեսական, գործոնային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև ապահովագրավճարների և դրանց վերաբաշխումների փորձագիտական ուսումնասիրությունների եղանակներ:

Հետազոտության գիտական նորույթը:

Հետազոտության գիտական նորույթը ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության համակարգի ներդրման արդյունավետության գնահատման, բարելավման ուղիների և ցուցանիշների մշակումն ու ներկայացումն է: Մասնավորապես.

- ներկայացվել է գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման հայեցակարգային մոտեցում՝ միտված ապահովագրական գործընթացի ցուցանիշների համախմբմանը և դրա կայունության՝ ֆինանսական վերլուծության բարելավմանը,
- մշակվել է գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության գնահատման կառուցակարգ՝ ըստ որի գնահատվում են ապահովագրական ընկերությունների ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության աստիճանը և ապահովագրական գործընթացի շահառուների նպատակադրումների ակնկալվող և փաստացի ցուցանիշների շեղումները,

- մշակվել և ներկայացվել են շահառուների տարբեր խմբերի ապահովագրական հատույցի ցուցանիշներ՝ ըստ որոնց հնարավոր է իրականացնել գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության համապարփակ գնահատում,
- մշակվել և ներկայացվել է գյուղապահովագրության ֆինանսական տեղեկատվական հոսքերի համակարգման և հաշվառման մոտեցում, ինչը թույլ է տալիս կառավարչական հաշվետվության միջոցով վերահսկել և վերլուծել ֆինանսական հոսքերի նպատակայնությունն ու արդյունավետությունը:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն է՝ նվիրված ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի քաղաքականության զարգացմանը: Այն ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ համապատասխան համակարգի ներդրման արդյունավետության գնահատման և հայեցակարգային ուղիների բացահայտման ուղղությամբ:

Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումները և մեթոդները կարող են կիրառվել գործնականում՝ ՀՀ գյուղատնտեսության ապահովագրության ոլորտում վարվող քաղաքականությունում, այդպիսով նպաստելով ապահովագրավճարների հավաքագրման և վերաբաշխման գործընթացների բարելավմանը, ագրարային ոլորտի ապահովագրական ծածկույթի ընդլայնմանն ու ապահովագրության շահառուների վարքագծի խթանմանը:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ մի շարք աշխատանքային քննարկումներ են իրականացվել տնտեսագետ-տեսաբանների, ՀՀ ապահովագրական ընկերությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև կատարված ուսումնասիրության որոշակի դրույթներ քննարկվել և հավանության են արժանացել Գավառի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնում, Հայաստանի գյուղատնտեսական դաշինքում, Թբիլիսիի «Free Academiy» կազմակերպության 12-րդ միջազգային գիտական համաժողովում: Քննարկված հարցերն ու հիմնադրույթներն իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի 7 հրատարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Դրանում ներառված են 12 գծապատկեր և 19 աղյուսակ: Նյութը շարադրված է 124, օգտագործված գրականության ցանկը՝ 8, իսկ հավելվածը՝ 10 էջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Գյուղատնտեսության ապահովագրության ֆինանսավորման և զարգացման միտումները ՀՀ-ում»*** գլխում անդրադարձ է կատարվել ապահովագրության զարգացման գործընթացին, դրա ֆինանսական վերլուծության բնութագրին, ինչպես նաև ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձի ներդրման հնարավորություններին:

Տասնամյակներ շարունակ Հայաստանը համարվելով գյուղատնտեսական երկիր՝ կուտակել է ագրարային տնտեսավարման որակյալ ռեսուրսներ, որոնք, սակայն, ներկայում արդյունավետ կերպով չեն օգտագործվում: Որպես հետևանք՝ վերջին տարիներին ՀՀ համախառն ներքին արդյունքի արտադրության կառուցվածքում նկատվում է գյուղատնտեսության բաժնեմասի նվազում. 2016 թ.՝ 16.4%, 2017 թ.՝ 15%, 2018 թ.՝ 13.9%, 2019 թ.՝ 12,0%:[1] Այս առումով, չափազանց կարևորվում է գյուղատնտեսության ոլորտում արդյունավետ ապահովագրական համակարգի ներդրումը: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է ապահովագրական ընկերությունների գործունեության ակտիվացում, մասնավորապես՝ աճում է արտոնագրված ապահովագրական ընկերությունների կապիտալը, ավելանում կնքվող ապահովագրական պայմանագրերի քանակը և այլն: Հատկապես ակնառու են կազմակերպությունների ապահովագրական մուտքերի, ապահովագրական պահուստների ավելացումները, հատուցումների գումարի աճը (տե՛ս աղյուսակ 1):

Ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունները տվյալ տեսակի ապահովագրական ծառայություն (պրոդուկտ) չեն ներկայացնում՝ չնայած ֆերմերների կողմից պահանջարկի առկայությանը (հատկապես կարկտահարություն և ցրտահարություն ռիսկերի գծով):

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ԱՎԾ, 2020, էջ 289:

Աղյուսակ 1

Ապահովագրական ընկերությունների գործունեության ցուցանիշները[2]

Ցուցանիշներ	2016	2017	2018	2019
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների քանակ, միավոր	7	7	7	7
Արտոնագրված ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալ, մլն դրամ	15 064	15 064	16 044	16 527
Գործող պայմանագրերի քանակ, միավոր	633 727	796 123	826 916	976 156
Ապահովագրական մուտքեր, մլն դրամ	33 141	35 263	41 380	49 277
Հատուցումների գումար, մլն դրամ	14 222	18 003	22 816	25 072
Ապահովագրական պահուստներ, մլն դրամ	19 186	19 896	21 175	27 249
Պարտավորությունների ծավալ բոլոր գործող պայմանագրերով, մլն դրամ	11 004 823	28 679 886	33 403 061	38 383 165

Միաժամանակ, գյուղատնտեսության ապահովագրության կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս գոյություն չունի և չի կիրառվում մի այնպիսի ապահովագրական մոդել, որը, ինչ-որ առավելությունների հետ մեկտեղ, չունենա նաև որոշակի թերություններ: Այսպես՝ երբ ապահովագրական գործընթացի կազմակերպման և վնասների փոխհատուցման ծանրության կենտրոնն ընկնում է պետության վրա, ապա դա բավական մեղմում է լայնածավալ գյուղատնտեսական կորուստների փոխհատուցման ֆինանսական ռիսկերը: Սակայն, մյուս կողմից, եթե պետությունն ապահովագրական ռիսկերն ամբողջությամբ է վերցնում իր վրա, ապա դա ոչ միայն մեծ բեռ է դառնում պետական բյուջեի համար, այլև ապահովագրական դաշտը դարձնում է ոչ մրցակցային: Ավելին, այդպիսով պասիվանում է նաև ֆերմերների գործունեությունը հնարավոր վնասների կանխարգելիչ միջոցառումների իրականացման ոլորտում, քանի որ գյուղատնտեսներն իրենց առավել ապահով են զգում պետական աջակցման պարագայում:[3]

Ատենախոսության երկրորդ՝ ***«Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության ֆինանսական գնահատման հիմնախնդիրները»*** գլխում մեկնաբանվում են ապահովագրական գործընթացի արդյունավետության գնահատման մոտեցումները՝ տարբեր շահառուների դիտանկյունից:

---

[2] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ԱՎԾ, 2020, էջ 460:

[3] Դավթյան Ս., Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը որպես վարկավորման արդյունավետության բարձրացման գործոն, // Այլընտրանք գիտական հանդես, #3, 2017, էջ 232-242:

Ավանդաբար, գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետությունը դիտարկվել է միայն ապահովագրական ընկերությունների և ֆերմերային տնտեսությունների տեսանկյունից: Սակայն, հարկ է նշել, որ ագրոապահովագրության գործընթացն անդրադառնում է ոչ միայն ապահովագրական պայմանագրի կողմերի գործունեության վրա, այլև ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է ունենում տնտեսության սոցիալ-տնտեսական զարգացման առումով՝ միկրոմակարդակից մինչև մակրոմակարդակ ընդգրկելով տարբեր շահառուների: Եվ եթե ապահովագրական գործընթացը դիտարկվի դրան առնչվող տարբեր շահառուների սպասումների բավարարման աստիճանի տեսանկյունից, ապա անհրաժեշտություն կառաջանա ագրոապահովագրության արդյունավետությունը ներկայացնել հավաքական ցուցանիշով՝ համախմբելով ինչպես միկրո-, այնպես էլ մակրոտնտեսական մակարդակներում ապահովագրական գործընթացի սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատականները:

Հեղինակի համոզմամբ, գյուղատնտեսական ապահովագրության հատույցի ցուցանիշները, շահառուների տարբեր խմբերի տեսանկյունից, հարկ է ներկայացնել ըստ համապատասխան գործակիցների: Ընդ որում, դրանք պետք է հաշվարկել՝ ձեռք բերված փաստացի հատույցը հարաբերելով շահառուների կողմից ակնկալվող հատույցին: Այսպիսով՝ որքանով որ այդ ցուցանիշներից յուրաքանչյուրը ձգտում է 1,0-ի, այնքանով դրան առնչակից գյուղատնտեսության ապահովագրության շահառուները ապահովագրական գործընթացը համարում են արդյունավետ: Այսպիսով՝ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման արդյունավետության գնահատման համալիր մոտեցումը ենթադրում է ապահովագրական գործընթացի բոլոր շահառուների նպատակադրումների և փաստացի ձեռքբերումների շեղումների ցուցանիշների համախմբում:

Հետևաբար՝ շահառուների նպատակադրումների իրացման սկզբունքով գնահատվող ագրոապահովագրության արդյունավետությունը ներկայացվում է ապահովագրական վերջնարդյունքների շեղումներով: Այս մոտեցմամբ արդեն իսկ համադրելի են դառնում գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետությունը ձևավորող գործոնների ազդեցության չափերը, և հնարավորություն է ստեղծվում համախմբելու դրա պատճառահետևանքային արդյունքներն ըստ մեկ ինտեգրալային ցուցանիշի՝ միջանցիկ մոտեցմամբ ներկայացնելով դա միկրո և մակրոմակարդակում:

Գյուղատնտեսական ապահովագրության գնահատման առաջարկվող մեթոդաբանությունը չի սահմանափակում հաշվարկներում ընդգրկվող գործոնների թվաքանակը: Ապահովագրական գործընթացն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն է թողնում տնտեսական գործունեությանն առնչվող թե՛ միկրո- և թե՛ մակրոտնտեսական հարթություններում գործող տարբեր սուբյեկտների վրա: Ուստի որքան ընդլայնվում է հաշվարկներում ընդգրկվող շահառուների շրջանակը, այնքան բարձրանում է

Ֆրանսիայի ազգային անվտանգության ոլորտային
Ազգային անվտանգության ապահովագրության ծածկույթ
Ազգային անվտանգության վտանգներ
<աշխատանքա-
կտնության
ազգային
անբարոյական
Հանրային
Հասարակական
Տնտեսական
Էներգետիկ
Ազգային անվտանգության շահերին սպառնացող բազմաբնույթ
Ազգային անվտանգության ֆինանսական ապահովագրության
Սոցիալական դրսևորման վերլուծություն
Ֆրանսիայի անվտանգության ապահովագրության
մոդելավորման 1. Ֆրանսիայի անվտանգության ապահովագրության
Ֆրանսիայի:

ազդեցությունը հիվանդների մոտ ինչպես նաև հանրային առողջության մակարդակի վրա, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների ծախսերի տեսանկյունից, ինչպես նաև կատարողական ցուցանիշների գնահատման, մասնավորապես՝ ռեսուրսների ինտենսիվության գործակցի, ինչպես նաև ռեսուրսների ինտենսիվության գործակցի հիման վրա, մասնավորապես՝

Գլուխն ամփոփելով՝ հեղինակը փորձել է ներկայացնել գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետ քաղաքականություն ապահովող որոշակի բաղադրիչներ՝ ըստ փոխկապակցվածության (տե՛ս գծապատկեր 1):

Ատենախոսության երրորդ՝ ***«Գյուղատնտեսության արդյունավետ ապահովագրության ֆինանսական գործիքակազմի կատարելագործումը»*** գլխում ներկայացվում են ապահովագրական գործընթացի ռիսկերի կանխարգելման, կառավարչական, տեղեկատվական ապահովվածության և ֆինանսական կայունության գնահատման բարելավման հիմնախնդիրները:

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը սահմանել է ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափեր, դրանց ձևավորման և հաշվարկման կանոնակարգ՝ համաձայն որի ապահովագրական ընկերությունների համար սահմանվում են հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների և դրանց փաստացի մեծությունների համադրումը 2020 թ. դրությամբ[4]

Նորմատիվի անվանումը	Նորմատիվ	Նաիրի ինշուրանս		Ռոսգոսստրախ		Սիլ ինշուրանս	
		Փաստացի	Խախտում	Փաստացի	Խախտում	Փաստացի	Խախտում
Ընդհանուր կապիտալի նվազագույն չափ (Ն1.1), մլն դրամ	1,500	2,555	առկա չէ	6,172	առկա չէ	1,557	առկա չէ
Կապիտալի համարժեքության նորմատիվ (Ն1.2)	1	1.26	առկա չէ	1.67	առկա չէ	1.26	առկա չէ
Իրացվելիության նորմատիվ (Ն2)	1	3.32	առկա չէ	3.89	առկա չէ	6.07	առկա չէ
Ստանձնած ապահովագրական մեկ ռիսկի առավելագույն չափի նորմատիվ (Ն3)	10%	9.73%	առկա չէ	1.95%	առկա չէ	9.52%	առկա չէ
Առանձին վերցրած՝ ակտիվների համարժեքության նորմատիվ (Ն4)	100.00%	100.00%	առկա չէ	100%	առկա չէ	100%	առկա չէ
Մեկ փոխառուի ռիսկի առավելագույն չափի նորմատիվ (Ն5)	20.00%	16.53%	առկա չէ	17.2%	առկա չէ	18.6%	առկա չէ

Վերոնշյալ նորմատիվներն արտացոլում են ոչ թե ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությունը, այլ ֆինանսական կարգապահության ապահովման մակարդակը, ինչը թույլ է տալիս իրականացնել կայուն ապահովագրական գործընթաց: Այս նպատակով հեղինակն առաջարկում է

[4] Կազմվել է ըստ ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվետվությունների:

ապահովագրական կազմակերպություններում կիրառել ապահովագրական ֆինանսական հոսքերի հաշվետվողականության այնպիսի համակարգ, որի միջոցով շահառուներին կներկայացվեն ապահովագրավճարների մուտքերի և ապահովագրական պատահարների փոխհատուցումների դրամական զուտ հոսքերը, որոնք հնարավոր է բացահայտել գյուղատնտեսական ապահովագրության դրամական ներհոսքերի ու արտահոսքերի հաշվեկշռմամբ (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Կազմակերպություններում գյուղատնտեսության ապահովագրության դրամական ներհոսքերի և արտահոսքերի հաշվեկշռումը տարեկան կտրվածքով[5]

	Դրամական ներհոսքերի աղբյուրներ		**Դրամական արտահոսքերի ուղղություններ**
F1	Պետական ամբողջական ապահովագրավճարներ	**E1**	Պատահարից գյուղմթերքների կորուստների փոխհատուցում
F2	Ապահովագրավճարների պետական սուբսիդավորում	**E2**	Պատահարից գյուղատնտեսական ծախսերի փոխհատուցում
F3	Ապահովագրավճարների համայնքային սուբսիդավորում	**E3**	Ապահովագրական ռիսկերի զսպման միջոցառումների ծախսերի փոխհատուցում
F4	Մասնավոր ապահովագրավճարներ	**E4**	Ապահովագրական պատահարի կարգավորման ծախսեր
F5	Ապահովագրավճարների այլ աղբյուրներ		
	Բացասական մնացորդ **ΣF – ΣE < 0**		**Դրական մնացորդ** **ΣF – ΣE > 0**

Ներկայացվող հաշվետվական տեղեկատվական հոսքերի համակարգման նպատակով առաջարկվում է ՀՀ ապահովագրական ընկերություններում ներդնել կառավարչական հաշառման սխեմա՝ ըստ որի կարելի է հաշվեկշռել գյուղատնտեսության ապահովագրության դրամական ներհոսքերն ու արտահոսքերը (տե՛ս գծապատկեր 2)՝ միաժամանակ շահառուներին իրազեկելով հավաքագրվող ապահովագրավճարների օգտագործման և ապահովագրական գործընթացի արդյունավետության մակարդակի մասին:

Հեղինակի կարծիքով, այս առումով նպատակահարմար է օգտագործել «Գյուղապահովագրության ֆինանսական հոսքեր» հաշիվը, որի դեբետային մասում արձանագրվում են գյուղատնտեսական ապահովագրական պատահարներից վնասների փոխհատուցմանն ուղղված դրամական արտահոսքերը, իսկ կրեդիտայինում՝ ապահովագրության ֆինանսավորմանն ուղղված դրամական մուտքերը (տե՛ս գծապատկեր 2):

Հեղինակն առաջարկում է նաև ֆինանսական կայունության պաշարի գնահատման նոր մոտեցում, որի դեպքում հաշվի է առնվում ապահովագրական գործընթացի շահառուների՝ ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափաբաժինը համապատասխան

[5] Կազմել է ատենախոսը:

ֆինանսական հոսքերի ձևավորման գործընթացին: Այսինքն՝ նկատի են առնվում այն ֆինանսական հոսքերը, որոնք նպաստում են ապահովագրական գործընթացին առնչություն ունեցող ապահովադրի ֆինանսական բեռին:



Գծապատկեր 2. Գյուղապահովագրության ֆինանսական հոսքերի կառավարչական հաշիվների թղթակցությունների առաջարկվող սխեմա[6]

Օրինակ՝ եթե պետությունը սուբսիդավորում է ապահովագրավճարների որոշակի բաժնեմաս (**G**), առևտրային բանկերը արտոնյալ վարկեր են տրամադրում գյուղատնտեսական ենթակառուցվածքների (կարկտապաշտպան ցանցեր, հակակարկտային կայաններ, կաթիլային ոռոգման համակարգեր և այլն) զարգացման համար՝ նվազեցնելով այդ նպատակով փոխառվող վարկերի տոկոսային ծախսերը (**B**), համայնքային բյուջեից ֆերմերներին տրվում են սուբսիդիաներ թունաքիմկատների ձեռքբերման նպատակով (**C**), բերքի վերամշակման կազմակերպությունները մթերվող գների սահմանման կայուն քաղաքականություն են իրականացնում գյուղմթերքների շուկայական գների կտրուկ նվազման պարագայում, կանխելով ֆերմերի վնասները (**M**)՝ կատարվում են ֆյուչերսային գնումներ, ապա ձևավորվում է մի իրավիճակ, երբ ֆերմերներին ֆինանսական աջակցություն է ցուցաբերվում հետևյալ չափով.

$$\Sigma FS=G+B+C+M \qquad (3)$$

Հետևաբար՝ որքան մեծանում է այդ աջակցության չափը (**ΣFS**), այնքան ֆերմերները շահագրգռված են լինում մասնակցելու ապահովագրությանն ու վճարելու **ΣEP** ապահովագրավճարներ: Այս առումով, առաջարկվում է ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման համընդհանուր ցուցանիշ՝ արտահայտված գյուղատնտեսական ապահովագրության գործընթացին առնչվող այլընտրանքային օգուտների և հավաքագրվող ապահովագրավճարների հարաբերությամբ (**ΣFS/ΣEP**): Բնականաբար, որքան մեծանում է այդ ցուցանիշը, այնքան բարձրանում է շահառուների

[6] Կազմել է ատենախոսը:

մասնակցային աստիճանը գյուղատնտեսական ապահովագրության ֆինանսական կայունության աջակցմանը:

Եզրակացություններ բաժնում ամփոփվել են հետազոտության կարևորագույն արդյունքները և կատարվել առաջարկություններ, որոնցից հիմնականներն են.

1. ՀՀ-ում ապահովագրական շուկան ակտիվացման միտում ունի, մինչդեռ, դրան զուգահեռ, ապահովագրական ընկերությունները, որոնք գործում են կայուն տնտեսավարման դաշտում, հետզհետե կորցնում են իրենց շահութաբերությունը: Միաժամանակ, առկա են մի շարք ծանրակշիռ խոչընդոտներ, որոնք թույլ չեն տալիս ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության ոլորտի լիարժեք կայացումը:

Այս համատեքստում հեղինակն առաջարկել է գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության գնահատման նկատմամբ ցուցաբերել հայեցակարգային մոտեցում:

2. ՀՀ գյուղատնտեսությունում թերի ենթակառուցվածքների առկայությունը կամ, ընդհանրապես, անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայությունը, գիտատեխնիկական առաջընթացի ոչ բավարար մակարդակը, ոչ լիարժեք կամ անկատար տեղեկատվական, հաշվառման համակարգերը, ինչպես նաև իրական վնասների հաշվառման հետ կապված և այլ բացթողումներ էականորեն խոչընդոտում են ոլորտում ապահովագրության ներդրումը: Այս մասին է վկայում նաև ՀՀ-ում գործող ապահովագրական ընկերությունների կողմից տվյալ տեսակի ապահովագրության գծով արդյունքներ չներկայացնելը, թեև, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ֆերմերների կողմից առկա է համապատասխան պահանջարկ՝ հատկապես կարկտահարության և ցրտահարության ռիսկերի առումով:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և դրանց լուծման անհրաժեշտությունը՝ հեղինակը նպատակահարմար գտել իրականացնել փորձնական (պիլոտային) ապահովագրություն որոշակի համայնքներում կամ մարզերում՝ մեկ կամ մի քանի մշակաբույսերի՝ կարկտահարություն և/կամ ցրտահարություն ռիսկերի գծով: Միաժամանակ, առաջարկվել է նաև իրականացնել ծախսերի կամ գյուղատնտեսական վարկի ապահովագրություն (վարկի չմարման ռիսկի ապահովագրություն) բացառապես բնակլիմայական, հիմնականում կարկտահարության և/կամ ցրտահարության ռիսկերի հետևանքով վարկի չմարման դեպքերում:

3. Գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում նույնպես կատարվել են մի շարք եզրակացություններ՝

առաջին, կապված ինչպես ապահովագրության օբյեկտների, այնպես էլ գործընթացի կազմակերպման հետ՝ տարբեր երկրներում նկատվում է գյուղատնտեսության ապահովագրության մոդելների բազմազանություն, և դրանց տեղայնացման հարցում պետք է առաջնորդվել Հայաստանի Հանրապետության ինչպես գյուղատնտեսական ոլորտի առանձնահատկություններով, այնպես էլ վերջինիս կարգավորման դաշտի ներկա վիճակով,

երկրորդ, ելնելով հայաստանյան ֆերմերների սոցիալ-տնտեսական ոչ բարվոք վիճակից՝ անհրաժեշտ է հաշվի առնել գյուղատնտեսության ապահովագրության այն միջազգային փորձը, որտեղ ապահովագրավճարների բեռի վերաբաշխումն իրականացվում է ապահովագրման շահառուների միջև,

երրորդ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի սուղ միջոցներով պայմանավորված՝ պետությունը չպետք է դիտարկել որպես ապահովագրավճարների հիմնական դոնոր, այլ հարկ է կիրառել ապահովագրավճարների այլընտրանքային ֆինան-սական աղբյուրների ներդրման միջազգային փորձը՝ պետության աջակցությանը դիմելով միայն լայնածավալ գյուղատնտեսական կորուստների ձևավորման դեպքում:

4. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի ներդրման վերոնշյալ խոչընդոտներով պայմանավորված՝ առաջարկվել է ապահովագրության արդյունավետությունը գնահատել համակարգային մոտեցմամբ՝ համակարգել գյուղատնտեսական ապահովագրության բոլոր շահառուների սպասումներն ապահովագրական գործընթացից, արձանագրել և համակարգել ապահովագրական գործընթացի փաստացի վերջնարդյունքներն ըստ որոշակի շահառուների, բացահայտել շահառուների սպասումների և ապահովագրության փաստացի վերջնարդյունքների շեղումները, ըստ շեղումների՝ հաշվարկել գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության ցուցանիշ:

Ատենախոսը մշակել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի ներդրման արդյունավետության գնահատման այնպիսի կառուցակարգ, որը հնարավորություն է տալիս գնահատելու ֆինանսական ռեսուրսներով ապահովվածությունը, գործընթացի տարբեր շահառուների նպատակադրումները, ինչպես նաև հաշվարկելու համապատասխան շեղումները:

5. Գյուղատնտեսական ապահովագրության ներդրման արդյունավետության չափման առաջարկվող մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս նախ՝ արդյունավետության գնահատման նկատմամբ ցուցաբերելու համալիր մոտեցում՝ հաշվի առնելով գյուղատնտեսության ապահովագրության շուրջ համախմբված բոլոր շահակիցների սպասումներն ապահովագրական գործընթացից, ապա գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության չափումն իրականացնելու ըստ ընդհանրական ցուցանիշի, որի հաշվարկման գործոնային շրջանակը ճկուն է և կարող է անընդհատ փոփոխման ենթարկվել՝ ելնելով տնտեսավարող տարբեր սուբյեկտների՝ ապահովագրական գործընթացի նկատմամբ ունեցած վերաբերմունքի բովանդակային փոփոխություններից:

Այսպիսով՝ հնարավորություն է ստեղծվում կատարելու գյուղատնտեսության ապահովագրության ներդրման արդյունավետության համապարփակ գնահատում՝ օգտագործելով շահառուների տարբեր խմբերի ապահովագրության հատույցի ցուցանիշները:

6. Գյուղատնտեսության ապահովագրության ռիսկերի զսպման շահադրդող արդյունավետ համակարգի ձևավորման ուղղությամբ առաջարկվում է իրականացնել հետևյալ քայլերը.

- ֆերմերների նախաձեռնությամբ գյուղատնտեսական ռիսկերի շարունակական նվազեցման դիմաց՝ ապահովագրավճարների նվազեցում,
- ապահովագրողի ցուցումով ռիսկերի կանխարգելման դեպքում՝ ապահովադրի լրացուցիչ ծախսերի փոխհատուցում,
- ապահովագրական միություններում ընկերությունների համագործակցություն,
- ապահովագրության շահառուների միջև ռիսկերի կանխարգելման գործառույթների վերաբաշխում:

7. Մշակվել է ապահովագրության գործընթացի հաշվետվողականության կառուցակարգ՝ կիրառելով գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետության չափման հաշվապահական համակարգ: Մասնավորապես՝ առաջարկվել է ներդնել գյուղապահովագրության ֆինանսական հոսքերը համակարգող հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի կազմել ֆինանսական հոսքերի վերաբերյալ համապատասխան հաշվետվություններ՝ ըստ որոնց էլ շահառուները կկարողանան ընդունել որոշումներ գործընթացների շարունակականության վերաբերյալ:

8. Առաջարկվել է կիրառել ֆինանսական կայունության պաշարի գնահատման մոտեցում, որի դեպքում հաշվի է առնվում ապահովագրական գործընթացի շահառուների մասնակցության չափաբաժինը ֆինանսական հոսքերի ձևավորման գործընթացին: Այս առումով, կարևոր է համարվել ներդնել ապահովագրական գործընթացի ֆինանսական կայունության գնահատման համընդհանուր ցուցանիշ՝ արտահայտված գյուղատնտեսության ապահովագրության գործընթացին առնչվող այլընտրանքային օգուտների և հավաքագրվող ապահովագրավճարների հարաբերությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Artak Martirosyan, Ashot Voskanyan, Measures Aimed at Mitigation of Risks and Introduction of Insurance System in the Agricultural Sector in the Republic of Armenia, «BULLETIN of National Agrarian University of Armenia», Scientific journal # 1 2016, 97-102.
2. Արտակ Մարտիրոսյան, Գյուղատնտեսության ապահովագրության ինստիտուտի ներդրման նախադրյալները ՀՀ-ում, «Ֆինանսներ և էկոնոմիկա» գիտական հանդես, #9 (217) 2018, էջ 74-78:
3. Արտակ Մարտիրոսյան, Ագրոապահովագրության արդյունավետության համակարգային գնահատման հիմնախնդիրները, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, 4 (5)/ 2019, էջ 178-185:
4. Արտակ Մարտիրոսյան, Գյուղատնտեսության ապահովագրության արդյունավետ քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ-ում, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, #1 (6)/ 2020, էջ 180-188:
5. Artak Martirosyan, Approaches to Measurement of Agricultural Insurance Efficiency, Finance and Accounting, Scientific journal, #1(5) 2020, 36-47.
6. Armen Hakobyan, Artak Martirosyan, Improving Cash Flows Managerial Accounting of Agricultural Insurance, Finance and Accounting, Scientific journal, #1(7) 2021, 157-167.
7. Արմեն Հակոբյան, Արտակ Մարտիրոսյան, Գյուղատնտեսության ապահովագրության ֆինանսական կայունության գնահատման բարելավումը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, #1 (12)/ 2021, էջ 157-162:

Artak Artush Martirosyan

AGRICULTURAL INSURANCE IMPLEMENTATION EFFICIENCY ASSESSMENT APPROACHES IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – "Finance, Accounting''.
The defense of the thesis will take place on October 28, 2021, at 14:00 o'clock, at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan str., Yerevan, 0025.

ABSTRACT

The research purpose and objectives.

The aim of the research was to present an improved methodology for assessing the effectiveness of the implementation of agricultural insurance in the Republic of Armenia, which will take into account as much as possible the goals of the beneficiaries related to the insurance process, comments on their availability from the point of view of financial control.

Based on the purpose of the research, the following issues were raised in the dissertation:

- develop a concept for evaluating the effectiveness of the introduction of agricultural insurance,
- propose criteria for evaluating the effectiveness of the implementation of agricultural insurance;
- propose a system for evaluating the effectiveness of the implemeantation, consolidating the sectoral expectations of all beneficiaries of agricultural insurance;
- introduce a common measure to evaluate the effectiveness of agro-insurance implementation, which will allow for a comparative analysis over time և factor,
- introduce an agricultural insurance accountability mechanism, providing feedback between the beneficiaries of the insurance process և, և thus contributing to the decision-making that contributes to increasing the efficiency of insurance implementation.

The scientific novelty of the research.

The scientific novelty of the research was the development of ways to improve the evaluation of the effectiveness assesment of the implementation agricultural insurance in RA. In particular:

- conceptual approaches to assessing the effectiveness of agricultural insurance are proposed based on the intended goals and actual results of the beneficiaries, taking into account also the improvement of the methodology for analyzing the use of the financial potential of insurance processes;
- a structure for assessing the effectiveness of the implementation of the insurance system in the agricultural sector has been developed, which takes into account both the assessment of the availability of financial resources and the goals of the beneficiaries of the insurance process and deviations from their actual values;
- indicators of insurance efficinecy for various groups of beneficiaries have been developed, on the basis of which it is possible to comprehensively assess the effectiveness of the implementation of agricultural insurance;
- an accounting approach has been developed for the coordination and systematization of financial information of agricultural insurance, which makes it possible using managerial statments, to control and analyze the purposefulness and efficiency of financial flows of insurance processes.

The scientific-practical significance of the research results.

The results of the research, the recommendations made, the approaches developed and the methods can find practical application in the policy pursued in the field of agricultural insurance of the Republic of Armenia, contributing to the improvement of insurance premium collection and redistribution process, expansion of insurance coverage in the agricultural sector.

Артак Артушевич Мартиросян

ПОДХОДЫ ОЦЕНКИ ЭФФЕКТИВНОСТИ ВНЕДРЕНИЯ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОГО СТРАХОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени доктора экономических наук по специальности 08.00.03 - «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится 28-ого октября 2021 года, в 14:00, в 014 Экономическом совете ВАК РА при Армянском государственном экономическом университете по адресу: 0025, Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования.

Целью исследования является представление улучшенной методологии оценки эффективности внедрения сельскохозяйственного страхования в Республике Армения, которая будет максимально учитывать ожидании бенефициаров, связанных с процессом страхования.

Исходя из цели исследования, в диссертации были изучены следующие вопросы:

- разработать концепцию оценки эффективности внедрения сельскохозяйственного страхования;
- предложить критерии оценки эффективности внедрения сельскохозяйственного страхования;
- предложить систему оценки эффективности внедрения сельскохозяйственного страхования, консолидирующую отраслевые ожидания всех бенефициаров;
- ввести интегральный показатель для оценки эффективности внедрения сельскохозяйственного страхования,
- внедрить механизм отчетности по сельскохозяйственному страхованию, обеспечивающий обратную связь между бенефициарами процесса страхования, тем самым способствуя принятию управленческих решений, которые способствуют повышению эффективности реализации страхования.

Научная новизна исследования.

Научная новизна исследования заключается в разработке способов улучшения оценки эффективности внедрения сельскохозяйственного страхования в РА. В частности:

- предложены концептуальные подходы оценки эффективности сельскохозяйственного страхования, с целью консолидации намеченных целей и фактически полученных показателей бенефициаров, а также усовершенствования методологии анализа использования финансового потенциала процессов страхования;
- разработана структурный подход оценки эффективности внедрения системы страхования в сельскохозяйственном секторе, которая учитывает как оценку наличии финансовых ресурсов, так и цели бенефициаров процесса страхования и отклонений от их фактических величин;
- разработаны показатели страхового возмещения различных групп бенефициаров, на основании которых передставляется возможным всесторонне оценить эффективность внедрения сельскохозяйственного страхования;
- разработан бухгалтерский подход координации и систематизации финансовой информации сельскохозяйственного страхования, который с помощью управленческой отчетности осуществляет контроль, а также анализирует целенаправленность и эффективность финансовых потоков страховых процессов.

Научно-практическая значимость результатов исследования.

Результаты исследования, сделанные рекомендации, разработанные подходы и методы могут найти практическое применение в политике, проводимой в области сельскохозяйственного страхования Республики Армения, способствуя совершенствованию процесса сбора и перераспределения страховых взносов, расширению сферы страховых сделок, а также мотивации действий страховых бенефициаров.